

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՇԵՆՔԵՐՈՒՄ ՏԵՂԱԿԱՅՎԱԾ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ
ՍԱՐՔԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՊԵԿ-ԳՀԾՁԲ-20/053**

ք. Երևան

«22» Հունվար 2021թ.

«ՀՀ պետական եկամուտների կոմիտեն», ի դեմս գլխավոր քարտուղար Էդգար Գևորգյանի, որը գործում է «ՀՀ պետական եկամուտների կոմիտեն»-ի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԱՅԹԻՌԵՍՈՒՐՍԻՍ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Դավիթ Շահբաջյանի, որը գործում է «ԱՅԹԻՌԵՍՈՒՐՍԻՍ» ՍՊԸ-ի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է շենքերում տեղակայված էլեկտրական սարքերի սպասարկման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը:

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն:

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը:

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը:

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը:

Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 2.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 2): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության առավելագույնը գինը կազմում է 8,844,000 (ութ միլիոն ութ հարյուր քառասունչորս հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2. Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի 7.13 կետով կնքվելիք վճարման ժամանակացույցով նախատեսված չափերով և ամիսներին:

Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱՃՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության

օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի Պատվիրատուն հրապարակում է «www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 13 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2 և N 2.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.13 Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում,

Կատարողը համաձայնագիրը կնքում և Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ պետական եկամտների կոմիտե
ք.Երևան, Մ. Խորենացի 3,7
ՀՎՀՀ 02647057
Հ/Հ 900011054013
ՀՀ ՖՆ աշխատակազմի
գործառնական վարչություն
Գլխավոր քարտուղար

ԿԱՏԱՐՈՂ

«ԱՅԹԻՈՒԵՍՈՒՐՄԻՍ» ՍՊԸ
ՀՀ, ք.Երևան, Ե. Քոչար 23/64
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570063238750100
ՀՎՀՀ 02677364
Տնօրեն

Է. Գևորգյան



Դ. Շահբազյան



Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆԱՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

		Ծառայության					մատուցման	
հրավերով նախատեսված ծախսերի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՆԱ դասակարգման և (CPV)	տեխնիկական բնութագիրը	չպահանջվող միավորը	Առավելագույն գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	հասցեն	Ժամկետը	
1	Շենքերում տեղակայված էլեկտրական ալյուրների ծառայություններ CPV 5071100/505	<p>Ծառայություն մատուցող կազմակերպությունը պետք է իրականացնի սպասարկման սրահներում տեղակայված թվով 10 հերթի կտրոն տրանսպորտ տեղմիջանակներ ընթացող հաճախորդների հոսքի կառավարման համակարգի սպասարկում:</p> <p>Հաճախորդների հոսքի կառավարման համակարգը ներառում է.</p> <ul style="list-style-type: none"> • Հոսքի կառավարում: • Հաշվետվությունների գեներացում; • Իրական ժամանակում՝ սպասարկման կենտրոնում իրամիջանակի տիրապետման և սպասարկման ընթացքին առցանց հետևելու հնարավորություն; • Քաղաքացիների կողմից բջջային հավելվածի միջոցով ինքուժ նախորդ գրանցվելու հնարավորություն: • Պետք է սպասարկման կենտրոնում տեղադրված կտրոն տարր տերմինալի միջոցով քաղաքացիների հնարավորություն ընձեռնելի հերթագրվել անհրաժեշտ ծառայության ստացման համար և ստանալ ինքնուրույն համար պարունակող կտրոն: • Պետք է կտրոն տրանսպորտ տերմինալի ինտերֆեյսի վրա տարատեսակ կրճակներ և ենթակրճակներ տեղադրելու, և դրանք օպտիմալ կերպով էկրանին դասավորելու հնարավորություն տրվի: 	դրամ	8,844,000	1	<p>1. Արարատյան մարզատուն վարչություն (Իսակով 10)</p> <p>2. Արևմտյան մարզատուն վարչություն 1) ք. Երևան 42, «ԱՄՕ» ՓԲԸ Կարգը բեռնային համայնք</p> <p>2) ք. Երևան, Տիգրան Մեծի 1-ին նրբ., 2-9</p> <p>3. Արևելյան մարզատուն վարչություն 1) Լոռու մարզ, ք. Վանաձոր, Մուկոյան 44</p> <p>2) Գոգավանի մարզային կետ-բաժին Լոռու</p> <p>3) Բագրատաշենի մարզային կետ-բաժին՝ Տավուշի մարզ, Գ. Բագրատաշեն</p> <p>4) Այրում-Ջիլիգայի</p>	Ծառայության մատուցումն իրականացվում է այդ նպատակով համապատասխան ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կտրոնի միջև համապատասխան համաձայնագրի կնքման մոմենտ: օրվանից հաշված առավելագույնը 345 օրացույցային օրվա ընթացքում:	

	<ul style="list-style-type: none"> • Պետք է աշխատակիցների կողմից հերթագրված կտրոնների սպասարկում իրականացնելու հնարավորություն լինի՝ <ul style="list-style-type: none"> ◦ Կանչել հերթում գտնվող ըստ հաճախորդին՝ հերթագրման հաջորդականության; ◦ Աշխատակիցների տեղեկացման համար՝ հերթի ընդհանուր պատկերի ցուցադրում; ◦ Այսել կտրոնի սպասարկումը՝ նշելով քարտեզում անհրաժեշտ ծառայության տեսակը՝ հաշվետվությունների հստակեցման նպատակով; ◦ Անհրաժեշտության դեպքում փոխանցել կտրոնի սպասարկումը մեկ այլ աշխատակցի կամ պատուհանի սպասարկումը՝ շարունակելու նպատակով; ◦ Հետաձգել կտրոնի սպասարկումը՝ մինչ աշխատանքային ավարտը: • Սպասարկման համար կանչվող կտրոնների հերթական համարները պետք է արտացոլվեն սպասարկման սրահում տեղադրված հեռուստացույցների վրա՝ ուշադրություն գրավող ձայնային ազդանշանով և կտրոնի համարը հայտարարելով; • Պետք է տեղեկատվական մոնիտորների վրա հղուկակների տեղադրման հնարավորություն ընձեռնվի: <p>Հաճախորդների հոսքի կտավարման համակարգը պետք է հաշվետվությունների գեներացման հնարավորություն ընձեռնի.</p> <ul style="list-style-type: none"> • Աշխատակիցների աշխատանքի և սպասարկման ընթացքում գեներացված տարատեսակ տվյալների հիման վրա գեներացնել հաշվետվություններ: • Փեներացնել հաշվետվություններ ցանկացած ժամանակահատվածի 	<p>մաքսային կետ-բաժին՝ Տավուշի մարզ, ք. Այրում, Երկաթուղայինների 20</p> <p>4. Հարավային մաքսատուն վարչություն</p> <p>1) Այրումից մարզ, ք. Սիսիան, Սիսիան-Երևան մայրուղի 7-րդ կմ</p> <p>2) Մեղրիի մաքսային կետ-բաժին՝ Այրումից մարզ, Մեղրի համայնք, Կարճևան բնակավայր, Մայրուղի 4</p> <p>5. Հյուսիսային մաքսատուն վարչություն (ք. Գյումրի, Թբիլիսյան խճ. 2/14)</p>	
--	---	---	--

		<p>համար:</p> <ul style="list-style-type: none"> Հաշվարկել սպասարկման բարելավման համար կարևորագույն ցուցանիշները, որ: քաղաքացիների սպասման միջին տևողություն, աշխատակիցների սպասարկման միջին տևողություն և այլն: Արտահանել բոլոր գեներացված հաշվետվությունները .xlsx ֆորմատով <p>Սպասարկման կենտրոնի ղեկավար անձնակազմը պետք է հնարավորություն ունենա առցանց իրական ժամանակում, հետևելու սպասարկման կենտրոնում աշխատակիցների աշխատանքին և սպասարկման ընթացքին:</p> <ul style="list-style-type: none"> Տեսնել սպասարկման սրահի ծանրաբեռնվածությունը տվյալ պահի դրությամբ: Տեսնել տվյալ պահին համակարգում գրանցված բոլոր կտրոնների մանրամասները: Սպասարկման սրահի ծանրաբեռնվածության ղեկավար օպերատիվ կերպով արձագանքել և բոլոր անհրաժեշտ փոփոխությունները իրականացնելու վերաբերյալ էլեկտրոնային նամակ ուղարկել համակարգը սպասարկող ընկերության էլեկտրոնային փոստին: Տեսնել համակարգում գտնվող, բայց տվյալ պահին սպասարկում չիրականացնող աշխատակիցներին: <p>Համակարգը պետք է նաև վերարտադրվել հնարավորություն ընձեռի առցանց՝ իրական ժամանակում, մեկ ընդհանուր հարթակով, հետևել բոլոր սպասարկման սրահների աշխատանքին՝ հիմք ընդունելով սպասարկման կարևորագույն ցուցանիշները:</p> <p>Քաղաքացիների սպասարկման որակի բարձրացման և նրանց կողմից հերթերում անցկացված ժամանակի կրճատման համար՝ համակարգը պետք է ունենա Android և iOS համակարգերով աշխատող բջջային սարքավորման միջոցով, նախօրոք հերթագրման հնարավորություն, որը օգտատերերի համար պետք է լինի անվճար: Այդ հավելվածը պետք է ունենա.</p> <ul style="list-style-type: none"> Սառնաձյուղի ընտրության հնարավորություն: 		
--	--	---	--	--

	<p>Մտական մասնաճյուղ տեսնելու</p> <ul style="list-style-type: none"> • հնարավորություն; անհրաժեշտ ընտրության թարգմանչներին ծառայության հիմնվելով հնարավորություն՝ առկա հերթերի մասնաճյուղում կատարված համակարգի էկրանի մենյուի վրա • Ապաստվածան համար քաղաքացուն հարմար օրվա և ժամի ընտրության հնարավորություն; ղեպքում կտրոնի սպասարկման հետաձգման հնարավորություն; • Քաղաքացու կողմից ընտրված ժամին տվյալ սպասարկման կենտրոնի ծանրաբեռնվածության ղեպքում մտական ազատ ժամի հաշվարկ և առաջարկվող ժամին կտրոն ստեղծելու հնարավորություն; • Ապաստվածան կենտրոններում արվա համակարգի տվյալների փոփոխության ղեպքում հավելվածում դրանց ավտոմատ թարմացում: <p>Համակարգի սպասարկման որակի բարձրացման նպատակով՝ անհրաժեշտության ղեպքում՝ սպասարկման մասին հաճախորդների կարծիքը հավաքագրելու համար նախատեսված հետադարձ կապի հնարավորություն պետք է լինի, որը կունենա.</p> <ul style="list-style-type: none"> • Տարատեսակ հարցերի ստեղծման հնարավորություն (ընդարձակ, կարճ, մի քանի կամ մեկ պատասխան ավելալորդ, ամբողջական) հնարավորությամբ և այլն); • ՀՀ ՊԵԿ-ի ֆիրմային գույներով ինտերֆեյսի ստեղծման հնարավորություն; • Հավաքագրված տվյալների դուրս բերման հնարավորություն՝ հաշվետվությունների տեսքով; • Հերթերի կատարված համակարգի հետ ինտեգրված աշխատանքի հնարավորություն: <p>Պատվիրատուի պահանջի հիման վրա համակարգը սպասարկող ընկերության</p>
--	---

էկստրոնային փոստին կարող է ուղարկվել էլեկտրոնային նամակ պատվիրատուի կողմից հերթերի կատարման համակարգում տեղեկատվության փոփոխության, ինչպես նաև սպասարկման սրահներում տեղակայված թվով 10 հերթի կտրոն սրահադրող տերմինալների տեխնիկական սպասարկում իրականացնելու վերաբերյալ, որն իր մեջ ներառում է՝

- Սատուցվող ծառայությունների ծառի թարմացում:
- Սպասարկման սրահների աշխատակիցների տվյալների փոփոխում և նոր օգտատերերի ստեղծում:
- Աշխատակիցների կողմից սրահադրվող ծառայությունների ցանկի թարմացում:
- Համակարգից դուրս գալու պատճառների ցանկի փոփոխություն:
- Աշխատակիցների մոտ հերթի կատարման համակարգի օգտագործման ընթացքում առաջացած խնդիրների լուծում և խորհրդատվության տրամադրում:
- Ինտրի առկայության մասին սպասարկող ընկերության էլեկտրոնային փոստին էլեկտրոնային ծանուցում ուղարկելուց հետո, անհրաժեշտության դեպքում, մասնագետի այց սպասարկման կենտրոն տեղում խնդիրն ուսումնասիրելու նպատակով:
- Հնարավորության դեպքում տեղում խնդիրների լուծում, որն իր մեջ կարող է ներառել տեղում անառք արգելափորման կամ մասի վերանորոգում:
- Անհրաժեշտության դեպքում անբողջ տերմինալի կամ անառք մասի տեղափոխում սպասարկման կենտրոն՝ խնդիրների լուծման նպատակով:

Անհրաժեշտ է արկա թվով 6 տերմինալների թերևտ տալիչի և համակարգի թարմացում (նորեռնիդացիա):

Թվով 10 տերմինալները պետք է ապահովել թերմոտալիչի համար նախատեսված թղթերով: Սպասարկման աշխատանքները պետք է իրականացվեն պատվիրատուի կողմից ուղարկված խնդրի առաջացման մասին ծանուցում ստանալու պահից՝

- ք. Երևանում՝ 24 ժամկա ընթացքում
- ՀՀ մարզերում՝ 36 ժամկա ընթացքում:

Պայմանագրի կողմ

Պատվիրատու

գտնվելու վայրը _____

հհ _____

հվհհ _____

գտնվելու վայրը _____

հհ _____

հվհհ _____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՍ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ _____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ « » « » 20 թ.

Պայմանագրի համարը՝ _____

Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N _____ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

Մատուցված ծառայությունների								
N	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամկացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց

Ծառայությունն ընդունեց

ստորագրություն

ազգանուն, անուն
Կ.Տ.

ստորագրություն

ազգանուն, անուն
Կ.Տ.

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման
նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

ազգանուն, անուն

ստորագրություն

Ընդունեց

հայտը նախագծած ներկայացուցիչ՝

ազգանուն, անուն

ստորագրություն